

"ԲԱՔԿԻ ԱՐՏՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՑԵԼ Է"

Posted on August 3, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



Չրույցը վարեց Զյամալ Ալին "Երրորդ Ուժ"ի հատուկ թղթակից, Բաքու, 3 Օգոստոս 2011
Հատուկ «Գեղարդ»ին

Օրերս Ադրբեջանի ընդդիմադիր կուսակցությունների առաջնորդներն որոշում են ընդունել զանգվածային բողոքի միջոցառումներ անցկացնելու մասին: Ինչպես հայտարարել է ընդդիմության առաջնորդ Իսա Ղամբարը, «Մուսավաթ» կուսակցությունը ընդունակ է ղեկավարել այդ ժողովրդական շարժումը: Նրա կարծիքով, իրական ժողովրդավարական փոփոխությունների կարելի է հասնել «միայն ժողովրդի կամքով»: Նա նշում է, թե «օլիգարխների կողմից միլիարդներ յուրացնելու» պայմաններում իրավիճակը երկրում կտրուկ վատանում է: Վերջին իրադարձությունների առթիվ «Մուսավաթ» կուսակցության ղեկավար, Ադրբեջանի խորհրդարանի նախկին նախագահ, հիմա ընդդիմության առաջնորդ Իսա Ղամբարը պատասխանել է Բաքվի մեր թղթակցի հարցերին:



Չրույցը վարեց Զյամալ Ալին "Երրորդ Ուժ"ի հատուկ թղթակից, Բաքու, 3 Օգոստոս 2011
Հատուկ «Գեղարդ»ին

Օրերս Ադրբեջանի ընդդիմադիր կուսակցությունների առաջնորդներն որոշում են ընդունել զանգվածային բողոքի միջոցառումներ անցկացնելու մասին: Ինչպես հայտարարել է ընդդիմության առաջնորդ Իսա Ղամբարը, «Մուսավաթ» կուսակցությունը ընդունակ է ղեկավարել այդ ժողովրդական շարժումը: Նրա կարծիքով, իրական ժողովրդավարական փոփոխությունների կարելի է հասնել «միայն ժողովրդի կամքով»: Նա նշում է, թե «օլիգարխների կողմից միլիարդներ յուրացնելու» պայմաններում իրավիճակը երկրում կտրուկ վատանում է: Վերջին իրադարձությունների առթիվ «Մուսավաթ» կուսակցության ղեկավար, Ադրբեջանի խորհրդարանի նախկին նախագահ, հիմա ընդդիմության առաջնորդ Իսա Ղամբարը պատասխանել է Բաքվի մեր թղթակցի հարցերին:



- ԱՊՀ Վիճակագրական կոմիտեի զեկույցի համաձայն, բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտն Ադրբեջանում մոտավորապես 3 անգամ մեծ է, քան, ասենք, Վրաստանում: Արդյոք, սա չի՞ վկայում Ադրբեջանի բնակչության բարեկեցության և այս առումով ադրբեջանական ընդդիմության կողմից պատրաստվող բողոքի զանգվածային միջոցառումներին մասնակցել չցանկանալու մասին:

- Վիճակագրական տվյալները պայմանական բնույթ են կրում: Եթե անդրադառնանք արաբական երկրների վերջին իրադարձություններին, ապա դրանց մեջ կան պետություններ, որտեղ կենսամակարդակն շատ ավելի բարձր է, քան Ադրբեջանում:

ՀՆԱ-ի, կոռուպցիայի մակարդակով և այլ ցուցանիշներով տվյալները նույնպես տարբերվում են: Երկրորդ՝ այն տեսությունը, թե զանգվածային դժգոհության ընդունակ են միայն սոված մարդիկ, այնքան էլ ճիշտ չէ: Ընդհակառակը, հասնելով կենսապահովման նվազագույն մակարդակին՝ մարդիկ ավելի պահանջկոտ են դառնում պետության հանդեպ, կյանքի հետագա բարելավում և իրենց իրավունքների ապահովում են ցանկանում: Եվ հետո, հասարակության մեջ գոյություն ունի սոցիալական անարդարություն հասկացությունը: Տարեկան մեկ մարդուն ընկնող 10 հազ. դոլարի մասին վիճակագրական տվյալները բոլորովին էլ չեն նշանակում, որ Ադրբեջանի յուրաքանչյուր բնակիչ հավասար շահաբաժին ունի: Աշխարհի տարբեր երկրներում հասարակական դժգոհություն առաջացնող ամենախոշոր գործոնը հենց հասարակության հարուստ մասի եկամուտների և մնացած մարդկանց աղքատության միջև եղած անհավասարակշռությունն է: Ինչքան մեծ է այդ տարբերությունը, այնքան ավելի ակտիվ են հանդես գալիս դժգոհ քաղաքացիները:

- Վերջերս ադրբեջանական բանակում արյունալի միջադեպ տեղի ունեցավ, որը յոթ զինճառայողի մահվան հանգեցրեց: Միաժամանակ Ադրբեջանը հայտարարում է ԼՂ խնդիրը ուժի միջոցով լուծելու պատրաստակամության մասին: Բավարարո՞ւմ է Ձեզ ադրբեջանական իշխանության վերաբերմունքը իր բանակի նկատմամբ:

- Եթե ինձ չի բավարարում երկրի ընդհանուր վիճակը, ապա, անշուշտ, ես չեմ կարող գոհ լինել բանակի վիճակից: Ադրբեջանի Չինված Ուժերը մեր հասարակությունից հեռու չեն գործում, բանակը հասարակության մի մասն է և ունի նույն խնդիրները, ինչ ամբողջ ժողովուրդը: Դա անխուսափելի է: Միևնույն ժամանակ «Մուսավաթ» կուսակցությունը, հանդես գալով հոգուտ Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ լուծման, այդ ճանապարհը դեռ սպառված չի համարում: Պարզապես ադրբեջանական կողմը պետք է ավելի հստակ ձևակերպի իր պահանջները, նշի իր «կարմիր գծերը»:

- Ինչպե՞ս եք գնահատում Ադրբեջանի և Ռուսաստանի, Ադրբեջանի և Իրանի միջև հարաբերությունները: Բաքվում բողոքի միջոցառումներ անցկացվեցին Իրանի դեսպանատան դիմաց, իսկ ՉԼՄ-ներում (լրատվական զանգվածային միջոցներ) կոչեր էին հնչում Թեհրանի քաղաքականության դեմ: Ինչպես հայտնի է, դարաբաղյան կարգավորումը մեծապես կախված է այդ երկրների դիրքորոշումից...

- Վերջին տարիների իրադարձությունները մատնացույց են անում ադրբեջանական արտաքին քաղաքականության սևանկությունը: Բավականին լուրջ խնդիրներ կան Ադրբեջանի և Արևմուտքի, Ադրբեջանի և Իրանի միջև: Ռուսաստանի հետ մեր հարաբերությունները նույնպես անամպ չեն: Միևնույն ժամանակ իշխանությունների մեղքով անգամ մեր հավատարիմ գործընկերոջ՝ Թուրքիայի հետ հարաբերությունները նույնպես միանշանակ չեն: «Մուսավաթը» կարծում է, որ Ադրբեջանի արտաքին

քաղաքականությունը պետք է հստակ միտված լինի դեպի եվրախնտեգրացում: Բացում պետք է կոնկրետ քայլեր ձեռնարկի եվրոպային ինտեգրվելու համար՝ միաժամանակ հարևանների հետ հաստատելով փոխշահավետ և վստահելի հարաբերություններ: Գիտեմ, որ դա դժվար է, սակայն անհրաժեշտ է:

- Հասարակության մեջ ձևավորվել է այն կարծիքը, որ Ադրբեջանի հաջորդ նախագահը դառնալու է Իլհամ Ալիևի կինը կամ իշխող ընտանիքի մեկ այլ անդամ: Հնարավո՞ր է, արդյոք, այդպիսի բան:

- Մենք կարծում ենք, որ Ադրբեջանի յուրաքանչյուր քաղաքացի կարող է հավակնել նախագահի պաշտոնին: Սակայն ոչ որպես ժառանգորդ կամ իշխող անձի կամուրջ, այլ ժողովրդի ցանկությամբ: Եթե նկատել եք, միջազգային դաշտում իշխանության ժառանգման նկատմամբ ուշադրությունը զգալիորեն մեծացել է: 2010 թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի նստաշրջանում ԱՄՆ նախագահ Օբաման ասաց, որ մարդկության թշնամիները ոչ միայն ահաբեկչական կազմակերպությունների ղեկավարներն են, այլև ավտորիտար պետությունների առաջնորդները, որոնք երկարաձգում են իրենց իշխանության ժամկետը, տանջում են սեփական ժողովրդին:

- Ադրբեջանի ՉԼՍ-ները հայտարարում են իշխանությունների կողմից իրենց վրա գործադրվող ճնշման մասին: Արդյոք Ադրբեջանում կա՞ մամուլի ազատություն:

- Ձեր գործընկերներից մեկն այս առիթով ասել է հետևյալը. «Ադրբեջանում կա խոսքի ազատություն, իսկ իշխանության համար կա լրագրողներին ծեծելու և ձերբակալելու ազատություն»: Էլմար Հուսեյնովի սպանության օրվանից անցել է արդեն վեց տարի: Նա սպանվել էր ազատ խոսքի համար, սակայն մինչև հիմա նրան սպաննողները չեն գտնվել և չեն պատժվել: Ադրբեջանի լրագրողները ձերբակալվում են և տարիներով պահվում բանտերում: Հասկանալի է, որ սա սահմնափակում է լրագրողների գործունեությունը, նրանք մտածում են՝ արժե՞ գրել իրենց հայտնի ճշմարտության մասին, արդյոք չե՞ն դառնա Հուսեյնովի հաջորդը: Ադրբեջանում խոսքի ազատության վիճակը միջազգային հեղինակավոր կազմակերպությունների զեկուլցներում միանշանակ բացասական է ներկայացված: Ադրբեջանը դասված է անազատ երկրների շարքին:

